ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վաղարշատ համայնքի ավագանու «Վաղարշապատ համայնքի 2023 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին» 2023 թվականի որոշումը կատարելու, բյուջեի վարչական մասի եկամուտի ավելացումը Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծով (այսուհետ՝ նախագիծ) նախատեսվում է իրականացնել հետևյալ փոփոխությունը .

1. Հիմք ընդունելով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N2111-Ն որոշման 4-րդ կետի 6-րդ ենթակետը և N5 հավելվածի N9 աղյուսակի 36-րդ և 37-րդ կետերը.

1) Ավելացնել բյուջեի վարչական մասի եկամուտների հատված 1 տող 1257 <Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)> տարեկան պլանը 761.8 հազ. դրամ:

2) Ավելացնել բյուջեի վարչական մասի ծախսերի արտադպրոցական դաստիարակության /բաժին 09, խումբ 5, դաս 1/ <Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին> հոդվածը /հոդ. 4511/ 761.8 հազ. դրամ:

3) Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Վաղարշապատի համայնքի ավագանու 2023 թվականի վերը նշված որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները: